

Թիւ 25622  
Փետրուար 22, 1978

**Հոգեշնորհ**

Տ. Պարէտ Վրդ. Երէցեան  
Հովիւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
Նախազահ ծխական Խորհուրդի  
Մոնթրէալ.

Սիրելի Հայր Պարէտ,

Ստացած ենք ձեր տեղեկազիբը, որով կը հաղորդուի որ ձեր նախազահութեամբ Փետրուար 12ին զումարուած համայնքիդ ծխական ժողովին մէջ կատարուած է ջիրա կան Խորհուրդի շորս անդամոց ընտրութիւնը:

Նկատի ունենալով որ ձեր ծխական ժողովը տեղի ունեցած է Թեմական Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան դրկել ծխական Խորհուրդի նորընտիր Դիւանի անդամոց անունները, հասցէնները եւ հեռածայնի թիւերը, ինչպէս նաև ներփակեալ էլը՝ ան հրաժեշտ ստորագրութիւններով եւ քրօէֆյուրուղթէն օրինակ մը՝ թեկնածուներուն ստացած քուէններով:

Օր հնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեան ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՃՅԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Արթօ Պասմանեան  
Տոքթ. Հրայր Տէր Գէորգեան  
Տոքթ. Ցարութիւն Արգումանեան  
Արա Կէրիքեան